ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«28» Մարտ 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 176-Հ

«ԷՅՐ ԿԱԻՐՈ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2024 թվականի մարտի 15-ի N 136-Ա հրամանը և «Էյր Կաիրո» ավիաընկերության 2024 թվականի մարտի 27-ի գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ «Էյր Կաիրո» ավիաընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածից սկսած՝ 2024 թվականի հունիսի 18-ից՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Կահիրե/HECA/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով նախատեսված

պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին՝ սույն կետում նշված երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2024 թվականի հունիսի 18-ը՝ 36 ամիս ժամկետով Երևան/UDYZ/-Կահիրե/HECA/ ուղղության համար:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի պաշտոնական կայքում:

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ